

ԱՎԱՐՏԱԾԱՄԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Անցնող դարաշրջանի վերջին ամիսներից հոկտեմբերն ու նոյեմբերը Մայր Աթոռ Ս. Էջմիածնի կյանքում, առավել ևս Գևորգյան Նոզնոր ճեմարանի պարբուժյան մեջ, թողեցին իրենց անկորնչելի եեփքը, քանի որ ճեմարանավարը 21 սարկավագներ հանդես եկան իրենց ավարտանակարի պաշտպանությամբ, իրենց ամբարձ գիտելիքներով հաշվերու եղան իրենց վարահված այն փոքր ավանդի համար, որը մոտ ապագայում, համաձայն փոքրիկ ավանդի հանդեպ դրսեռոված հավաքարության, այլևս փոխարինվելու է չափազանց մեծ ժառանգությամբ. «Ազնի ծառայ և բարի, զի ի փոքրու հաւաքարիմ եղեր, լիջիր իշխանութիւն ունել ի վերայ քանի քաղաքի» (Նուկ. Ժթ. 17):

Սույն թվականի հոկտեմբերի 10-ը և 27-ը ուրախության ու ցնծության օրեր էին Մայր Աթոռում և հարկավես Գևորգյան Նոզնոր ճեմարանում, քանի որ երկարագու ընդմիջումից հետո ճեմարանի գեղեցկազարդ սրահում գենդի ունեցավ 1998 և 1999 թթ. դաշտ շշանավարդ սարկավագների պարտանակարի պաշտպանություն:

Հոկտեմբերի 10-ին ավարտանակարի հրապարակային պաշտպանությամբ հանդես եկան Վիզեն սրկ. Ղազարյանը («Մաքրենոս վրդ. Զուղայեցու քարոզները», գիտական դեկավար՝ Դակոր Քյոսեյան), Արդար սրկ. Թումանյանը («Եղիազար Կաթողիկոս Այնթափից», գիտական դեկավար՝ Հրայը Միրզոյան), Վահե սրկ. Վահունին («Պետքոս արքեպիսկոպոս Բերդումյան-Վղամալյան Նախիջնացու «Կշիռ արդարութեան»», գիտական դեկավար՝ Պողոս Խաչարյան), Արման սրկ. Սարոյանը («Գրիգոր Խալաթեցու Դայսմավորքն ըստ Էջմիածնի մագիստրարանի ձևագրերի», գիտական դեկավար՝ Լարդան Դերիկյան), Մանվել սրկ. Շարարյանը («Դրեշվակաբանություն», գիտական դեկավար՝ S. Պարգև արքեպս. Մարտիրոսյան) և Միքայել սրկ. Մելիքյանը («Հուստինիանոս կայսեր կրոնական քաղաքականությունը և Կ. Պոլսի Ե Տիեզերական ժողովը», գիտական դեկավար՝ Ավետիս Քալաշյան):

Խոհ հոկտեմբերի 27-ին իրենց ավարտանակարի պաշտպանությամբ հանդես եկան Սամվել սրկ. Կիրակոսյանը («Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Էջմիածին» շաբաթաթերթը, գիտական դեկավար՝ Սանդրո Բեհրույդյան), Մկրտիչ սրկ. Այվազյանը («Սուրբ Պատրարքացը և Նովիաննես Արծիշեցու «Պատրարքի մեկնությունը»», գիտական դեկավար՝ Դակոր Քյոսեյան), Դայկ սրկ. Պողոյանը («Խոսքին մեկնության» աստվածաբանությունը», գիտական դեկավար՝ Պողոս Խաչարյան) և Հրայր սրկ. Խաչարյանը («Պետքոս արքեպս. Բերդումյանի «Տա-

բեկան քարոզների Մեծ պահբի մասը», գիտական ղեկավար՝ Տ. Միջայել ծ. վրդ. Աշապահյան):

Յուրաքանչյուր պաշտպանությունից առաջ հանձնաժողովը, որի անդամներն էին Գերշ. Տ. Շահե արքեպոս. Աճեմյանը, Գերշ. Տ. Եղնիկ եպոս. Պետրոսյանը, տիտար Պողոս Խաչարյանը, Հրայր Միրզոյանը, Հակոբ Քյոսեյանը, Գևել Գրիգորյանը, Անելիկայացնում էր իր կարծիքը:

«Մարդեսու վրդ. Զուղայեցու քարոզները» ավարտաճառը աչքի էր ընկնում գիտական բարձր մակարդակով: Վիզեն սրկ. Ղազարյանը մարդենագիտական գովայների հիման վրա ճշգրիտ էր նախ Մարդեսու վրդ. Զուղայեցու քարոզների քանակը (29), ապա Մաշփոցյան Մարդենադարանի ձեռագրերը համեմատելով կազմել դրանց քննական բնագիրը:

Ավարտաճառների մեծ մասը գրված է նյութերի պարշաճ գիտական մակարդակով, եղած գրականության հնարավոր ընդգրկմամբ, բնագրերը բննական դեսրով ներկայացնելու միջումով, մի հանգամանք, որ արժեքավոր է դարձնում ներկայացվող ավարտաճառը: Այս իմաստով գովելի է Վահե սրկ. Վահոնու ավարտաճառը, որ յոր ձեռագրերի հիման վրա կազմված է Պետրոս Բերդումյանի «Կշիռ արդարութեան» ասդրվածարանական-իմաստասիրական երկի բնագիրը: Այդ քննական բնագիրը նկատի ունենալով ավարտաճառի հեղինակն անում է իր վերլուծությունները և նորակացությունները:

Հայսմավուրքի խմբագրությունների մեջ նշանակալի գեղ է գրավում Գր. Խոլաբեցու Հայսմավուրքը, որին և իր ուսումնասիրությունն է նվիրել Արման սրկ. Սարոյանը: Շեղինակի կազմած համեմատական դաշտակով հնարավոր է լինում պարկերացում դաշտակով արդի խմբագրության զարգացման ընթացքը: Ցանկալի էր, որ հեղինակը ամբողջությամբ չիմնվեր մինչև 1999 թ. հրաժարակական գիտական գրականության վրա, այլ եղանակումները հիմնվեին նաև սեփական հետազողությունների վրա:

Մանվել սրկ. Շաքարյանը իրեն ավարտաճառի նյութ ընդունել է հրեշտակարանությունը, մի նյութ, որի մասին եղած գրականությունը կամ ասույթները ցաքուցրիվ են: Ավարտաճառի հեղինակը ի մի է բերել արդի ժամանակների հայ և օդար հեղինակների կարծիքները, մասնավորապես Ազգարանզեղոսի, Եղնիկ Կողբացու, Գրիգոր Տաթևացու և Եկեղեցու հայրերի՝ հրեշտակարանությանը վերաբերող և նաև Ասդրվածնչի դրույթները:

Վիզեն սրկ. Ղազարյանի ավարտաճառը քննող հանձնաժողովը գնահատել է «գերազանց», իսկ մյուսներինը՝ «լավ», որ ինքնըսպինքյան ավարտաճառները ներկայացրած սարկավագների բանհմացության, դրանացան աշխատանքի, ինչպես նաև գիտնական ղեկավարների բարեկիլտն աշխատանքի արդահայրությունն է:

Հաջորդ օրը «լավ» գնահատականի արժանացավ միայն Հայկ սրկ. Պոոշյանի ավարտաճառը, իսկ մյուսները՝ «բավարար»:

* * *

Դեկտեմբերի 16-ին և 27-ին Գլորյան Հոգևոր Ծեմարանում շարունակվեց 1998-1999 թթ. ուսումնական դարձարքարտ սարկավագների ավարտածառերի պաշտպանությունը:

Դեկտեմբերի 16-ին իրենց ավարտածառերի պաշտպանությամբ հանդես եկան Վահե սրբ. Հովհաննիկյանը («Ս. Վահան Գողթմացու վկայարանությունը»), գիրական դեկավար՝ Պողոս Խաչագրյան), Խաչագործ սրբ. Տաշյանը («Ներսես Ե Աշուարակեցի Կաթողիկոսի կյանքն ու զորունեությունը»), գիրական դեկավար՝ Տ. Եղիշե ա. քին. Սարգսյան), Արտեն սրբ. Քարանշյանը («Խորագոր ժամագիտեաց», գիրական դեկավար՝ Տ. Մակար վրդ. Հովհաննիսյան), Արդակ սրբ. Սահակյանը («Ս. Գրիգոր Նյուսացին և նրա «Մոլուսի կյանքը» երկը», գիրական դեկավար՝ Տ. Եգինիկ եպս. Պետրոսյան) և Բաբկեն սրբ. Նախյանը («Ս. Հոգու եղարանությունը և «Քիում» եզրի արդացոյտն հայ դավանարանական սարվածարանության մեջ»), իսկ դեկտեմբերի 27-ին հանդես եկան Մամիկոն սրբ. Ավետիքիսյանը («Էջեր Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերության պարմությունից»), գիրական դեկավար՝ Սաներո Բենիքյան), Աշոր սրբ. Ղազարյանը («Մայր Աթոռ Ս. Էջմիածնի վայարանը 1771-1800 թթ.», գիրական դեկավար՝ Արփաշես Մարթևոսյան), Սահակ սրբ. Գասլարյանը («Այրիվանք կամ Գեղարդավանք», գիրական դեկավար՝ Արփաշես Մաթևոսյան), Վաղարշակ սրբ. Ծագությանը («Խոր Վիրապի վանքը», գիրական դեկավար՝ Վարդան Դերիկյան), Արտեն սրբ. Պարուրյանը («Ուսուսապանի հայկական գատթօջախները և ուսահայոց թեմի կազմավորումը մինչև 18-րդ դարի 2-րդ կեսը»), գիրական դեկավար՝ Ավետիք Հարությունյան) և Արամ սրբ. Մալխասյանը («Էջեր խորհրդային կարգերի օրոր Հայ Եկեղեցու և պետքության փոխարարենությունների պարմությունից», գիրական դեկավար՝ Սաներո Բենիքյան):

Այս անգամ ևս, ինչպես նախորդների ժամանակ, յուրաքանչյուր պաշտպանությունից առաջ քննիչ հանձնաժողովը ներկայացնում էր իր կարծիքը:

Համաձայն քննիչ հանձնաժողովի հայտնած կարծիքների, բոլոր ավարտածառելի հետինակները դրսուրել են բանասիրական հմբություն, կարողացել են փասփերի համադրությամբ կափարել ճիշտ և համոզիչ եղանակնումներ: Միով բանիվ, շրջանավարդ սարկավագները հիմնականում կարողացել են հաղթահարել իրենց ընկրուած նյութերը: Այնուհանդերձ, սակայն, պաշտպանության ներկայացված աշխարհագործությունը, ըստ քննիչ հանձնախմբի, գերծ չէին նաև թերություններից: Դրանք ամենին էլ չեն նետնացնում ներկայացված ուսումնասիրությունների արժեքը, ուստի և քննիչ հանձնաժողովը երաշխավորում է բոլոր աշխարհների հրապարակային պաշտպանությունը:

Միջնադարյան հայ մատենագրության ամենահարուստ ժամերից մեկը եղել է Վարքագրությունը, որը թեև վաղուց արժանացել է ականավոր հայագեկրներից շափերի ուշադրությանը, սակայն պարզվում է, որ դեռ կան բազմաթիվ նահապակներ,

որոնց կյանքը, գործն ու նրանց մասին սրբեղծված գրական ժառանգությունը ինչպես հարկն է, չեն ուսումնասիրվել, չեն սրբեղծվել նրանց հիշարակին արժանի գիրական աշխափությունները: Այդօրինակ նահարակներից է պարմական Հայաստանի Գողթըն զավարի իշխանական փոհմի զավակ U. Վահան Գողթնացին:

Սույն ավարդաճառի հեղինակ Վահեն սրբ. Շովենիյանն իր առջև դրել է մի խնդիր՝ ուսումնասիրել Ը դարի սուրբ նահարակ U. Վահան Գողթնացու վկայաբանությունը: Ի պարփիվ երիտասարդ հեղինակի պետք է ասել, որ բարեխղճությամբ ուսումնասիրելով U. Վահան Գողթնացու մասին եղած ձեռագիրը ու դպագիրը աղբյուրները, ինչպես նաև հրապարակի վրա առկա գիրական գրականությունը, այդ թվում և վերջին դարիներին երարարակվածները, ընդհանուր առմամբ կարողացել է սրբեղծել հաջողված աշխափություն:

Խաչարուր սրբ. Տաշշյանն իր ավարդաճառի նյութ է ընդունել «Ներսես Ե Աշփարակեցի Կաթողիկոսի կյանքն ու գործունեությունը»: Իր ավարդաճառի առաջարանում հեղինակը ուրվագծում է 19-րդ հարյուրամյակում հայոց պարմության կարևորագույն իրադարձությունները, որոնց հենքի վրա նախանշում դարաշրջանի վեց դասնամյակների պարմությունը՝ անխօնելիունն կապված Ներսես Աշփարակեցու անձի և գործի հետ: Այնուհետև նա բավականին հանգամանալից պարմական ակնարկով ներկայացնում է Ներսես Աշփարակեցուն անդրադարձած հեղինակներին և ցույց դալիս, որ նա միանշանակ չի գնահարվել ոչ իր ժամանակակից գործիչների, և ոչ էլ հենքազա ուսումնասիրողների կողմից: Այս առումով հենքարքիր են հեղինակի դիմուղությունները հայ պարմարանների՝ Ներսես Աշփարակեցուն դպագնահարականների վերաբերյալ:

«Եղինակը հիշարակում է իր ուսումնասիրության թեմային առնչվող գրականությունն ու սկզբնադրյուրները, եիմնավորում թեմայի կարևորությունն ու արդիականությունը:

Բարեկեն սրբ. Նանյանի ավարդաճառի թեման է «Ս. Շոգու եզրարանությունը և «Քիում» եզրի արդացողումը հայ դավանաբանական ասրբածարանության մեջ»: Սուրբ Շոգու քիման վարդապետությունը հայ ասրբածարանության ոչ խորը ուսումնասիրված հարցերից է: Այս իմաստով համարձակ քայլ է արել աշխարհասիրողը՝ այդ նյութի վերաբերյալ պարմարաններով իր դիմումային աշխափությունը:

«Դարկանշելի է, որ նա օգտագործել է մեծ թվով աղբյուրներ՝ եիմնականում օգագարելու, և կարողացել է զգալի շափով լուծել իր առջև դրված խնդիրները»:

Այնուամենայնիվ, նյութը կարիք ունի շաբ ավելի հանգամանալի ուսումնասիրության և պարզաբանումների:

Արքակ սրբ. Սահակյանի ավարդաճառի թեման է «Ս. Գրիգոր Նյուսացին և նրա «Մովսեսի կյանքը» երկը»: «Եղինակը հիմնականում կարողացել է հաղթահրել նյութը, վեր հանել Նյուսացու խորհրդապաշտության առանձնահարկությունները՝ «Մովսեսի կյանքը» երկի հանգամանալից քննությամբ: Նեղինակին մնծապես

օգնել են աղբյուրների, այդ մասին եղած ուսումնասիրությունների քաջ իմացությունն ու դեղին օգրագործումը:

Պաշտպանությունից հետո քննիչ հանձնախումբը, ըստ կարգարված աշխարհանքի արժեքի, գնահատել է յուրաքանչյուր ավարտաճառը. Վահե սրկ. Շովեսիյանի, Արփակ սրկ. Սահակյանի և Քարկեն սրկ. Նաևյանի ներկայացրած ավարտաճառերը գնահատվել են «քաջալավ», Արսեն սրկ. Բարսեղյանի և Վաղարշակ սրկ. Ծափուրյանի աշխարհանքները՝ «լավ», իսկ Խաչարուր սրկ. Տաշյանի, Մամիկոն սրկ. Ավետիսյանի, Աշոտ սրկ. Ղազարյանի, Սահակ սրկ. Գևալյարյանի, Արսեն սրկ. Պափուրյանի, Արամ սրկ. Մալխասյանի աշխարհանքները՝ «քավարար»: Այս ամենը վկայությունն է այն բանի, որ վերոհիշյալ սարկավագները իրենց գիրական դեկավարների հետ շահացել են «ըստ կարելոյն» առավել հաջող ուսումնասիրություններ ներկայացնել: Շույժ ցավակի է, որ այս անգամ ևս, «քաջալավ» և «լավ» գնահարված ավարդանառերի հետ մենքունք, որոշ աշխարհանքներ արժնորվածին «քավարար», մի պարագա, որ մրգահոգիչ է. ավարդանառերի գիրական դեկավարները պետք է ավելի խսդապահանջ լինեն, անմիջականորեն և գործնականորեն օգնեն գիրության ասպարեզում առաջին քայլերը կարարող իրենց աշակերդներին, խրստապահանջ լինեն նաև ոճական, քերականական և ուղղագրական սխալների նկարմամբ:

Ուստի և քննիչ հանձնաժողովը, հաշվի առնելով այդ պարագան, պաշտպանությանը ներկա ճեմարանականներին հորդորեց, որ ապագա շրջանավարդներն իրենց ավարդանառերը գրեիս ցուցաբերեն առավել նախանձախնդրություն և հետևողականություն, հետքնեն բոլոր այն խորհուրդներին ու ցուցումներին, որոնք կորցնեն իրենց գիրական դեկավարների կողմից:

Քննիչ հանձնախումբը հարկացես նշեց, որ ճեմարանակարգ սաներն առավել հանգամանալից ուսումնասիրեն հայ եկեղեցական մագիստրությունը և վեր հանեն այդ դարավիր ու անզին ժառանգության գոհարները, որոնց կարիքն այսօր, առավել քան երբեմն, խիստ զգացվում է:

Պաշտպանությունների ավարդին իր եզրափակիչ խոսքում S. Եզնիկ նպա. Պետրոսյանը շնորհավորեց Գևորգյան Նոգելոր ճեմարանն ավարդած սարկավագներին և քաջալերեց, որ այդքանով չափարիեն իրենց աշխարհանքը և այսուհետև ևս իրենց ուսումնասիրություններով շարունակեն ներդրում ունենալ գիրության ասպարեզում: